ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Ադելաիդա Մանուկյանս, շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հաշվարկի և վերլուծության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024 թվականի մայիսի 21-ից (2024 թվականի մայիսի 20-ին կնքված թիվ 5 պայմանագրի համաձայն):

2024 թվականի մայիսի 21-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 20-ը ներառյալ իրականացրել եմ պայմանագրի 1.3. կետի բ), գ), ե), ենթակետերին վերաբերող հետևյալ գործառույթներն ու աշխատանքները.

1) Կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հաշվարկի վարչության պետի հանձնարարությամբ իմ կողմից ստուգվել են էկոպարեկային ծառայության ՀՀ մարզային վարչությունների համապատասխան տեղամասերի՝ Գյումրիի, Գյումրիի (Արփի լիճ), Ջիլիզայի, Կապանի, Սյունիքի, Արագածոտնի, Վայոց Ձորի, «Խոսրովի անտառ» պետական արգելոց»-ի, Ճամբարակի, Հրազդանի, Իջևանի, «Դիլիջան» ազգային պարկ»-ի պահպանության աշխատանքների համակարգողների կողմից ներկայացված՝ «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեների արձագանքման» պլանների ճշտությունը և օրինակելի ձևի կետերին համապատասխանությունը:

2) Հիմք ընդունելով՝ Ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 15-ի № 6-Ն և Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մայիսի 03-ի №156-Ն համատեղ հրամանով հաստատված՝ «Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեների արձագանքման» պլանից բխող պահանջները, մշակել եմ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում տեղի ունեցած հրդեհների վերաբերյալ կազնվող արձանագրության օրինակելի ձևի նախագիծը և ներկայացրել քննարկման: Այն ընդունվել է և էկոպարեկային ծառայության պետի 10.07.2024 թվականի № Ն/1595 հանձնարարականով ուղարկվել էկոպարեկային ծառայության մարզային վարչությունների պատասխանատուներին՝ այսուհետ բռնկված հրդեհների արձանագրումը կատարելու միայն տրված ձևաչափով:

3) Համաձայն Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մարտի 22-ի № 87-Ն հրամանով հաստատված՝ «Պետական անտառներում, անտառային հողերում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների վերաբերյալ արձանագրությունը տրամադրելու» կարգի 2-րդ կետի պահանջի՝ մշակել եմ իրավախախտման վերաբերյալ կազմված արձանագրությունների հաշվառման մատյանում գրանցման ձևաչափի (կարգին կից հավելված), ինչպես նաև օրենսդրության խախտումների արձանագրությունների հաշվառման մատյանի վարման կարգի նախագիծ և ներկայացրել էկոպարեկային ծառայության պետի տեղակալ Արուսյակ Սիրադեղյանին՝ քննարկման և հետագա կիրառման նպատակով:

4) Մշակել եմ հանձնարարականի նախագիծ՝ հրդեհավտանգ ժամանակաշրջանում անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվող

հակահրդեհային միջոցառումների վերաբերյալ, որն էկոպարեկային ծառայության պետի 25.06.2024 թվականի № Ն/1402 գրությամբ ուղարկվել է ՀՀ մարզային էկոպարեկային ծառայությունների ստորաբաժանումների աշխատանքների համակարգողներին:

5) Էկոպարեկային ծառայության պետի տեղակալ Արուսյակ Սիրադեղյանի բանավոր հանձնարարությամբ, կապված էկոպարեկային ծառայության ստեղծման հետ, կատարել եմ փոփոխություններ «Հայաստանի Հանրապետության պետական անտառներում հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության *1998* թվականի սեպտեմբերի 19 № 589 (որոշումը խմբ. 24.12.15 *№ 1569-Ն*) որոշման մեջ և ներկայացրել էկոպարեկային ծառայության պետի տեղակալ Արուսյակ Սիրադեղյանին:

6) Համաձայն ներքին գործերի նախարարության 2024 թվականի մարտի 29-ին № 43/95/5/43480 գրությամբ ստացված ձևաչափի, պատրաստել եմ տեղեկատվություն անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում արձանագրված հրդեհների վերաբերյալ, որն էկոպարեկային ծառայության պետի 02.07.2024 թվականի № Ե/1/771 գրությամբ ներկայացվել է Շրջակա միջավայրի նախարարությանը:

7) «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման» պլաններում ՀՀ ՆԳ նախարարության 02.07.2024 թվականին № 44/95/6/108697 գրությամբ արված առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ նախապատրաստել եմ պատասխան գրության նախագիծ, որն էկոպարեկային ծառայության պետի 04.07.2024 թվականի Ե/1/784 գրությամբ ուղարկվել է ՀՀ Ներքին գործերի նախարարություն:

8) Մշակել եմ շրջաբերականի նախագիծ, որն էկոպարեկային ծառայության պետի 16.07.2024 թվականի Ն/1639 գրությամբ ուղարկվել է էկոպարեկային ծառայության մարզային ստորաբաժանումների տեղամասերի աշխատանքների համակարգողներին:

9) «Անտառների պետական հաշվառման տվյալների հավաքագրման և տրամադրման ձևերը հաստատելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրամանի նախագծի վերաբերյալ 17.07.2024թ.№8661 հանձնարարականի համաձայն, ներկայացրել եմ առաջարկություններ, որն էկոպարեկային ծառայության պետի 18.07.2024թ. № Ե/1/858 գրությամբ ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարությանը:

10) «Անտառներում վնասատուների և հիվանդությունների (վնասակար օրգանիզմների) զարգացման վաղ փուլի հայտնաբերման, անտառապաթոլոգիական ուսումնասիրությունների և անտառներում վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքների պլանավորման, կազմակերպման և իրականացման մեխանիզմների» ուղեցույցի վերաբերյալ ՇՄ նախարարի 18.07.2024թ.№ Ն/13.2/8949 հանձնարարականի վերաբերյալ ներկայացրել եմ առաջարկություններ, որն էկոպարեկային ծառայության պետի 19.07.2024թ № Ե/1/870 գրությամբ ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարությանը:

11) Հալիս ամսին էկոպարեկային ծառայության կողմից պահպանվող «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի, «Ջրվեժ» անտառպուրակի, և «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքներում տեղի ունեցած անտառային հրդեհների վերաբերյալ կատարել եմ համապատասխան վերլուծություն և տվյալները ներառել ընդհանուր ամփոփ-տեղեկատվությունում:

12) Ամփոփվել է հուլիս ամսվա ընթացքում «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառներում և ԲՀՊՏ ՊՈԱԿ-ների տարածքներում տեղի ունեցած հրդեհների վերաբերյալ էկոպարեկային ծառայության տեղամասերի համակարգողներից ստացված

տեղեկատվությունները / էկոպարեկային ծառայության պետի 2024 թվականի ապրիլի 01-ի № Ն/665 հանձնարարական/ և ներառվել ընդհանուր ամփոփ տեղեկատվությունում:

13) Մշակել եմ հուլիս ամսվա հրդեհների վերաբերյալ ՆԳՆ-ին տրվող տեղեկատվությունը, որն էկոպարեկային ծառայության պետի 02.08.2024թ № Ե/1/912 գրությամբ ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարություն:

14) Մշակել եմ գրության նախագիծ «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի տեղամաս-մասնաճյուղում հաշվառված քամատապալ, ձյունակոտոր ծառերի ընտրանքային կարգով ուսումնասիրությունների իրականացման համար թեկնածուների ցանկի (Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի օգոստոսի 02-ի № Ն/16.11/9018 հանձնարարակն), որն էկոպարեկային ծառայության պետի պարտականությունները կատարողի 02.08.2024թ. № Ե/3/922 գրությամբ ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարությանը:

15) «Անտառակառավարման ազգային տեղեկատվության (NFMIS)» համակարգում» տեղեկատվությունների ներբեռնման և մուտքագրման գործառույթների վերաբերյալ, ըստ հասանելիության աստիճանի, կազմել եմ ցանկը, որն էկոպարեկային ծառայության պետի պարտականությունները կատարողի 07.08.2024թ. № Ե/3/931 գրությամբ տրամադրվել է շրջակա միջավայրի նախարարությանը:

16) Մշակել եմ գրության նախագիծ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Արտանիշ տարածքի ջրածածկման ենթակա տարածքների անտառմաքրման աշխատանքների համար ծառերի ընտրանքային կարգով ուսումնասիրությունների իրականացման նպատակով թեկնածուների ցանկի, որն էկոպարեկային ծառայության պետի պարտականությունները կատարողի 07.08.2024թ.№ Ե/3/932 գրությամբ ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարությանը:

17) Մշակել եմ «Շիկահող» պետական արգելոցի և «Զանգեզուր», «Խուստուփ», «Սոսու պուրակ», «Սև լիճ» պետական արգելավայրերի համար կառավարման պլանի մշակում» ծրագրի ավարտական լրամշակված հաշվետվության (Շրջակա միջավայրի նախարարության 06.08.2024 թ. № ՄԳ/1350 հանձնարարական) վերաբերյալ առաջարկությունները, որն էկոպարեկային ծառայության պետի 12.08.2024թ. № Ե/1/956 գրությամբ ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարությանը:

18) Մշակել եմ գրության նախագիծ՝ քաղաքացի Գոհարիկ Գալստյանից ստացված ենթադրյալ իրավախախտման տեղեկատվության վերաբերյալ, որն էկոպարեկային ծառայության պետի առաջին տեղակալի 14.08.2024թ.№ Ե/3/964 գրությամբ ուղարկվել է ՀՀ ներքին գործերի նախարարության Կոտայքի ոստիկանության մարզային վարչություն:

19) Մշակել եմ գրության նախագիծ՝ քաղաքացի Գոհարիկ Գալստյանից ստացված ենթադրյալ իրավախախտման վերաբերյալ, որն էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղարի 14.08.2024թ.№ Ե/2/970 գրությամբ ուղարկվել է քաղաքացուն:

20) Ի կատարումն ՇՄ նախարարի 2024 թվականի օգոստոսի 16-ի N Ն/13.4/10488 հանձնարարականի՝ անտառի ազգային տեղեկատվական համակարգի (NFMIS) անխափան աշխատանքը ապահովելու համար ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ, նախապատրաստել եմ գրության նախագիծ, որն էկոպարեկային ծառայության պետի 19.08.2024թ. № Ե/1/990 գրությամբ ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարությանը:

21) Ի կատարումն ՇՄ նախարարի 2024 թվականի հուլիսի 10-ի Մ-12637 հանձնարարականի, փոխվարչապետ Մ.Գրիգորյանի գրասենյակից ստացված՝ մինչև 2030թ. ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման 2-րդ փուլի (2026-2030 թթ.) միջոցառումների ծրագրի մշակման հարցով աշխատանքային խմբի

կայանալիք նիստերի վերաբերյալ, մշակվել է գրության նախագիծ, որն էկոպարեկային ծառայության պետի 20.08.2024թ. № Ե/1/995 գրությամբ ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարություն:

Կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հաշվարկի և վերլուծության վարչության փորձագետ՝ Ադելաիդա Մանուկյան

21.08.2024թ.